ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՌԱՊՍ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՁԿՆԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1. ՈԼՈՐՏԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿԸ ........... 3
2. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ .................. 6
3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ..................... 6
4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ........................................................................ 14

4.1. Երկրաձևաբանություն, արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր ........................................................................... 14

4.2. Կլիմա ........................................................................................ 18

4.3. Օդային ավազան .......................................................................... 20

4.4. Ջրային ռեսուրսներ ..................................................................... 21

4.5. Հողեր ........................................................................................ 27

4.6. Բուսական և կենդանական աշխարհ ............................................... 29

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ ................................... 32

4.8. Պատմամշակութային ժառանգություն ............................................. 35

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .......................................................................... 36
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ .......................................... 39
7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ......................................................... 41

Հավելված 1. Զկնաբուծարանի տարածքի և շինությունների հողհատկացման հատակագծերի պատճենները ................................ 43

Հավելված 2. «Ռապս» ՍՊԸ 27.03.2023թ.-ի №0064-23 ջրօգտագործման թույլտվության պատճենը ...........................................…................. 49

Հավելված 3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը ................................................ 54

Հավելված 4. «Ռապս» ՍՊԸ-ի պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանի քաղվածքը ....................................................... 57

## 1. ՈԼՈՐՏԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՑԱՆԿԸ

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373-Ն, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը. մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդ. ՀՕ-110, 21.06.2014թ., խմբ. 03.05.23թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է ՀՀ-ում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Թափոնների մասին» (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.) ՀՀ օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» (ՀՕ-82-Ն, 11.04.2005թ.), որով կարգավորում է ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 05.05.2011թ.-ի №608-Ն որոշում, որով հաստատվել է ձկնաբուծական մթերքների արտադրության ձեռնարկություններում վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման՝ ՎԱՎԿԿՀ (HACCP) համակարգի ներդրման միջոցառումների ծրագիրը:
- ՀՀ կառավարության 22.05.2003թ.-ի № 703-Ն որոշում, որով հաստատվել է ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը:
- ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրաման, որով հաստատվել են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի №533-Ն հրաման, որով հաստատվել են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.05.2002թ.-ի №138-Ն հրաման, որով հաստատվել են «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը:
- ՀՀ կաավարության 28.12.2023թ.-ի № 2305-Ն որոշում, որով սահմանվել հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը:

## 2. ՁԵՌՆԱՐԿՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

Ձկնաբուծարանում գործունեությունը իրականացվում է «ՌԱՊՍ» ՍՊ ընկերության կողմից: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերութան գրանցման համարն է 77.110.00952, գրանցման ամսաթիվը՝ 08.06.2007թ., գրանցման հասցեն՝ Հայաստան, Արարատ, Հովտաշատ, 0725: Ձկնաբուծական տնտեսությունը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ բնակավայրի վարչական սահմաններում (գ. Հովտաշատ, 2-րդ փողոց, տ. 49/1), բնակավայրից մոտ 0.9կմ հեռավորության վրա: Սիփանիկ բնակավայրը գտնվում է ձկնաբուծարանի տարածքից մոտ 1.1կմ, Հայանիստ բնակավայրը՝ 2.65կմ և Դարբնի բնակավայրը՝ 1.4կմ հեռավորությունների վրա (նկարներ 1-2):

Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են. 40° 5'38.36"N, 44°21'30.02"E: Տարածքի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով ներկայացված են ստորև.

1. 4440236.2360, 8445187.022;, 2. 4440262.7724, 8445181.2690; 3. 4440335.7389, 8445202.2442; 4. 4440300.6424, 8445333.2790 ; 5. 4440204.1187, 8445307.5604:

Ձկնաբուծարանները գտնվում են «Ռապս» ՍՊԸ տարածքից 200-750մ, մշակվող գյուղատնտեսական հողերը՝ մոտ 425մ հեռավորությունների վրա (նկար 3): Հրազդան գետը գտնվում է ձկնաբուծարանի տարածքից 1.6կմ, Սևջուր գետը՝ 5.3կմ հեռավորությունների վրա, 3.5-5.2կմ հարավ-հարավ-արևելք են գտնվում ԽՍՀՄ շրջանում կառուցվածք արհեստական լճակները (նկար 4): Ձկնաբուծարանը կապված է Հովտաշատ գյուղի հետ 0.8կմ երկարությամբ բարեկարգ բնահողային ճանապարհով:

## 3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ձկնաբուծական տնտեսության ենթակառուցվածքները զբաղեցնում են մոտ 1.35հա տարածք: Ձկնաբուծական տնտեսության տարածքում են գտնվում հետևյալ ենթակառուցվածքները.

1 - Տնտեսական շինություն
2 - Ենթակայան
3 - Գոմ
4 - Շին. II հարկ
5 - Մանրաձկան արտադրամաս
6 - N3 ջրավազան
7 - N1 ջրավազան
8 - N2 ջրավազան
9 - Ծածկ
10 - Պարիսպ
11 - Ծածկ




«ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի տարածք

Նկար 1.


Հայանիստ
Սիփանիկ
Հովտաշատ
Դարբնիկ
2.65կմ
1.1կմ
1.4կմ
0.9կմ
«ՌԱՊՍ» ՍՊԸ
ձկնաբուծարանի
տարածք

Նկար 2.


Ձկնաբուծարաններ
Hovtashat
Ձկնաբուծարաններ
585մ
520մ
260մ
200մ
<Ռապս> ՍՊԸ
425մ
506մ
750մ
330մ
Մշակվող
գյուղ.հանդակներ
Ձկնաբուծարաններ
Google Earth
Image © 2022 Airbus
900 m
N

Նկար 3.



«ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի տարածք
1.6կմ
3.5կմ
5.3կմ
5.2կմ
Լճակ
Լճեր


Նկար 4.



Ձկնաբուծարանի տարածքում գտնվող ենթակառուցվածքները
1 - Տնտեսական շինություն
2 - Ենթակայան
3 - Գոմ
4 - Շին. II հարկ
5 - Մանրաձկան արտադրամաս
6 - N3 ջրավազան
7 - N1 ջրավազան
8 - N2 ջրավազան
9 - Ծածկ
10 - Պարիսպ
11 - Ծածկ


Նկար 5.

Ենթակառուցվածքների տեղադիրքը ներկայացված է նկար 5-ում:

Ձկնաբուծարանի տարածքի և շինությունների անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը ներկայացված է հավելված 1, 3-ում: Ընկերությունը զբաղվում է ծիածանափայլ իշխանի բուծմամբ: Անհրաժեշտ քանակի 30-50 գրամանոց մանրաձուկը գնվում է: Մանրաձկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի:

Այս ձկնատեսակի մեկ առանձնյակը մինչև 1կգ աճեցնելու համար պահանջվում է 1.8կգ կեր:

Տարվա միջին արտադրողականությունը կազմում է 112տ ապրանքային ձուկ, որի համար անհրաժեշտ է գնել մոտ 104795 հատ 25-30 գրամանոց մանրաձուկ:

104795 հատ մանրաձկից ելքը կազմում է մոտ 65%՝ 68117 հատ ձուկ: Ապրանքային ձուկ է դառնում 68117 հատ ձկան մոտ 85%-ը՝ 57899 հատ ձուկը:

Սատկած մանրաձկան հավաքման համար օգտագործվող ցանցերը և տարողությունները ենթակա են պարտադիր ախտահանման յուրաքանչյուր օգտագործումից հետո:

Սատկած մանրաձուկը պայմանագրային հիմունքներով հանձնվում է ֆիզիկական անձանց և համապատասխան սանիտարական ուսումնասիրությունից և վերամշակումից հետո օգտագործվում է որպես անասնակեր:

Ջրավազանների վրա տեղադրված են աէռատորներ, որոնք ապահովում են ջրի շրջապտույտը՝ անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար և ստեղծում են բարենպաստ միջավայր կենդանիների բուծման համար:

Ավազաններ ջրամատակարարումը իրականացվում է «ՌԱՊՍ» ՍՊԸ 27.03.2023թ.-ի №0064-23 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան՝ 3 գործող խորքային հորերից՝ առավելագույնը 5045.97հազ.մ$^3$/տարի, 13824.6մ$^3$/օր, 160.0լ/վ ծավալով (հավելված 2):

Ջրառի իրականացման վայրերի կոորդինատներն են.

| | | |
|---|---|---|
| 1. | X=44° 21' 25.1" | Y=40° 05' 41.1" |
| 2. | X=44° 21' 30.3" | Y=40° 05' 39.6" |
| 3. | X=44° 21' 29.4" | Y=40° 05' 37.1" |

Ջրհեռացումը կատարվում է դրենաժային համակարգով դեպի Հրազդան գետը 4541.38հազ.մ$^3$/տարի, 12442.2մ$^3$/օր, 144.0լ/վ ծավալով:

Ջրհեռացման կետերի կոորդինատներն են.

| | | |
|---|---|---|
| 1. | X=44° 21' 33.52" | Y=40° 05' 36.15" |
| 2. | X=44° 21' 26.71" | Y=40° 05' 38.33" |

Ջրառի և ջրհեռացման վայրերը արտացոլված են նկար 6-ում:

Կեղտաջրերի մաքրում չի կատարվում: Ջրօգտագործման թույլտվությամբ և 27.03.2023թ.-ի կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի №34 նորմերով սահմանվել են կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի հետևյալ տվյալները՝ ԹԿՊ$_5$ 2.54գ/մ$^3$, ԹԿՊ 10.15գ/մ$^3$, կախութային մասնիկներ 12.15գ/մ$^3$, քլորիդներ 15.45գ/մ$^3$, սուլֆատներ 18.23գ/մ$^3$:




Նկար 6.

(կանաչով նշված են ջրառի վայրերը, դեղինով՝ ջրհեռացման)

Կիրառվում է կիսափակ շրջանառու համակարգ: Ընդհանուր համակարգից ջուրը պարբերաբար մղվում է մեխանիկական զտման սարքերով (երկշերտ ֆիլտրերով) կահավորված ավազան, որտեղ ջրից ֆիլտրում են մեխանիկական խառնուրդները, կախութային նյութը: Անջատված մեխանիկական խառնուրդները, կախութային մասնիկները ջրի հակառակ շիթի կիրառմամբ նստեցվում են հատուկ տարողությունների մեջ, ինչը այնուհետև ուտիլիզացվում է կենցաղային աղբի հետ համատեղ: Մաքրված ջուրը վերադաձվում է ընդհանուր համակարգ, ինչը ապահովում է ջրային ռեսուրսի արդյունավեր օգտագործում: Մինչև 2024 թվականի մարտի 1-ը

կկատարվի նաև ելքային ջրերի 40% մաքրում, ինչի ժամանակ ելքային ջրերը կմղվեն մեխանիկական զտման սարքերով (երկշերտ ֆիլտրերով) կահավորված ավազան (որն արդեն իսկ գործում է), կմաքրվեն և կվերադարձվեն ձկնաբուծարանի ջրօգտագործման փակ ջրախնայող շրջանառու համակարգ: Ջրավազանների վրա տեղադրված են աէռատորներ, որոնք ապահովում են ջրի շրջապտույտը՝ անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար և ստեղծում են բարենպաստ միջավայր կենդանիների բուծման համար:

Գոլորշիացման հաշվին հնարավոր է ջրավազանների ջրի 10%-ի կորուստ, ինչը համալրվում է ըստ անհրաժեշտության:

Ձկնաբուծարանի աշխատանքային ռեժիմը ընդունված է շուրջ տարի՝ 365 օր, 24 ժամով: Աշխատողների թիվը կազմում է 4 մարդ:

Ձկների աճեցման և ձկնարտադրանքի մշակման ձեռնարկությունների համար սանիտարական նորմերով սահմանված է 100մ սանիտարական պահպանության գոտի, ինչը ապահովված է՝ Հովտաշատ բնակավայրի մոտակա շինությունները գտնվում են ձկնաբուծարանի սահմանից նվազագույնը 900մ հեռավորության վրա:

Ձկնաբուծարանի և արտադրամասերի տարածքում սահմանված են և կիրառվում են հետևյալ սանիտարական նորմերը.

- Ձեռնարկության տարածքի տրանսպորտային ուղիները, քայլուղիները, արտադրական տարածքները բետոնապատ/ասֆալտապատ են, կահավորված են անձրևաջրերի հեռացման համակարգով;
- Արտադրական տարածքների հեռավորությունը ավտոճանապարհներից և խոշոր փողոցներից գերազանցում է 15մ;
- Տնտեսական շինությունների (զարաժ, պահեստներ) հեռավորությունը ձկնաբուծական և մշակման արտադրամասերից պետք է գերազանցում է 50մ;
- Տարածքում արգելվում է ձկնաբուծության և ձկնամթերքի մշակման հետ կապ չունեցող շինությունների կառուցումը և շահագործումը;
- Կենցաղային աղբի համավքման տարրողությունները տեղադրված են բետոնապատ հարթակների վրա, երեք կողմից շրջափակված են պատերով;
- Մթերքի արտադրության շինությունները լիարժեք մեկուսացված են լինեն տեխնիկական արտադրամասերից;
- Ձկնամթերքի պահման սառցարանային խցիկները ապահովում են նորմատիվային փաստաթղթերով սահմանված սառեցման ջերմաստիճանը;

- Ձկնամթերքի արտադրության շինությունների բետոնապատ հատակները պատված են պոլիմերային նյութով, որը չունի սորբցիոն հատկություններ, ջրա-, թթվա- և յուղակայուն, ինչպես նաև ալկալիների նկատմամբ դիմացկուն է;

- Արտադրամասերում բոլոր խողովակներն ու մալուխները մեկուսացված են, ներկառուցված պատերի կամ հատուկ սյուների մեջ;

- Առաստաղները ունեն հարթ ջրամակուն մակերևույթ, ներկված են բաց գույնի էմուլսիոն ներկերով;

- Ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղաջրերի և գազատար խողովակները ներկված են տարներ գույներով, ինչի մասին նշված է ձեռնարկության արտադրական անվտանգության կանոններում:

Ընկերությունը հանդիսանում է «ՀԷՑ» բաժանորդ, էլեկտրամատակարարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով: Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, արտադրական տարածքների ջեռուցման համար օգտագործվում են էլեկտրական սարքեր:

Կիրառվում է ԵՄ տարածքում (Իտալիա) արտադրվող SKRETTING էքստրուդացված կերը: Կերի բաղադրությունն է՝ պրոտեին 45.22%, յուղ 12.06%, կալցիում 1.22%, ֆոսֆոր 0.8%, ցելյուլոզա 3.97%, խոնավություն 9.2%: Կերի հատիկների չափը՝ մոտ 3մմ:

Ձկների կերակրման նորմը կապված է ջրավազաններում ջրի փաստացի ջերմաստիճանից և ներկայացված է աղյուսակում (արտահայտված է ձկան քաշի %-ով):

| Ջրի T, °C | Ձկան միջին քաշը, գ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 50 | 100 | 200 | 400 | 800 | 1200 | 1600 | 1800 |
| 2 | 0.25 | 0.23 | 0.18 | 0.10 | - | - | - | - |
| 4 | 0.36 | 0.33 | 0.27 | 0.17 | 0.04 | - | - | - |
| 6 | 0.63 | 0.57 | 0.49 | 0.35 | 0.19 | 0.09 | 0.02 | - |
| 8 | 1.16 | 1.07 | 0.92 | 0.72 | 0.48 | 0.36 | 0.27 | 0.22 |
| 10 | 2.11 | 1.92 | 1.64 | 1.29 | 0.95 | 0.78 | 0.68 | 0.62 |
| 12 | 3.54 | 3.12 | 2.57 | 1.99 | 1.51 | 1.30 | 1.18 | 1.10 |
| 14 | 4.80 | 4.10 | 3.28 | 2.51 | 1.93 | 1.70 | 1.56 | 1.48 |
| 16 | 4.43 | 3.85 | 3.14 | 2.45 | 1.91 | 1.68 | 1.55 | 1.47 |
| 18 | 2.85 | 2.57 | 2.17 | 1.72 | 1.31 | 1.12 | 1.01 | 0.93 |

Քանի որ կերակրումը կատարվում է սահմանված նորմերին համապատասխան, կերի ամբողջ ծավալը յուրացվում է ձկան կողմից, կերի մնացորդի նստվածքներ չեն առաջանում, ավազանի հատակներին չեն նստում, ջրի աղտոտումը այս դեպքերում բացառվում է: Կերի դոզան և կերակրման միջակայքերը վերահսկվում են հերթապահ օպերատորի կողմից:

## 4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 4.1. Երկրաձևաբանություն, արտածին երկրաբանական երևույթներ, սեյսմիկ բնութագիր

Երկրաձաբանական տեսակետից «ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի շրջանն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 820-1000մ-ի սահմաններում, բուն ձկնաբուծարանի տարածքում՝ 829-830մ:

Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով:

Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ:

Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգածալքային-գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էռոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգովարությունններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել է Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները:

Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է սահմանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների: Տարածքում տեղ-տեղ բարձրանում են ծալքաբեկորավոր հիմքի ելուստներ (Խոր Վիրապ, Սարիպապ, Սալիովիտ) կամ խարամային կոներ (Դավթի բլուր, Մեծամոր):

Բուն ձկնաբուծարանի գտնվում է մինչև 4° լանջերի թեքությամբ հարթավայրային հատվածում: Շրջանի մակերևույթի երկրաձևաբանական և թեքության անկյունների սխեմատիկ քարտեզը բերվում են ստորև նկարներ 7 և 8-ում:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ ձկնաբուծարանի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ$^2$ գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 9):

ՇՐՋԱՆԻ ԵԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցածր /700-1100մ/ ենթահորիզոնական մասամբ դարավանդավորված ներլեռնային հարթավայրեր

Նկար 7.

ՇՐՋԱՆԻ ԼԱՆՋԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - 0-4 աստիճան թեքությամբ հարթավայր

Նկար 8.




Նկար 9.

«ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Դա ըստ էության պայմանավորված է տարածի երկրաձևաբանական առանձնահատկություններով՝ տարածքն իրենից ներկայացնում է մինչև 4° թեքությամբ հարթավայր:

Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի» ձկնաբուծարանի տարածքից ամենամոտ սողանքային մարմինները գտնում են ավելի քան 12.65կմ հեռավորության վրա՝ Նոր Խարբերդ բնակավայրից շրջակայքում (նկար 10):

Ձկնաբուծարանի տարածքում այլ արտածին երկրաբանական երևույթներ՝ քարաթափեր, կարստային խոռոչներ, մակերևույթի նստեցումներ/իջվածքներ չեն արձանագրվել:


Landslide Location Map
Legend
Scarp of Landslide
Landslide < 2 ha.
Landslide >= 2 ha.
ha: hectare(s)
Map Sheet: K-38-137
1:150,000
0 1.25 2.5 5 km
Map Projection:
Universal Transverse Mercator Zone 38N
(WGS 1984)
JAPAN INTERNATIONAL COOPERATION AGENCY
THE STUDY ON
LANDSLIDE DISASTER MANAGEMENT
IN THE REPUBLIC OF ARMENIA
Printed in September 2005
25.5կմ
12.65կմ
13.4կմ
«ՌԱԳԴԱ» ՍՊԸ
վերամշակիչ
գործարան
A1-34

Նկար 10.

4.2. Կլիմա

«ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի տարածքը գտնվում է չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 11), չափավոր ցուրտ ձմեռով և շոգ ամառով (ամռանը մինչև $+40^0$C, իսկ ձմռանը` $-10^0$C): Ընդհանուր առմամբ Մասիս տարածաշրջանում օդի հուլիսյան ջերմաստիճանը տատանվում է +22°C-ից +26°C տիրույթում, իսկ հունվար ամսի միջին ջերմաստիճանը դիտվում է -5-0°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 200-300 մմ: Քամու միջին արագությունը կազմում է 2-3 մ/վրկ:

Ստորև 1-7 աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա Արտաշատ և Երևան «Էրեբունի» օդերևութաբանական կայանների տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 78 | 73 | 63 | 58 | 59 | 54 | 51 | 52 | 57 | 68 | 73 | 79 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | |
| 79 | 75 | 62 | 56 | 57 | 49 | 45 | 46 | 49 | 62 | 73 | 79 |

Աղյուսակ 2.

Ձնածածկույթը

| Առավելագույն տասնօրյա-կային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածած-կույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավե-լագույն քանակը, մմ |
|---|---|---|
| Արտաշատ կայան | | |
| 40 | 35 | 46 |
| Երևան «Էրեբունի» կայան | | |
| 58 | 47 | - |

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը ըստ ամիսների, մմ

| Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | միջին |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | |
| 18 | 18 | 27 | 36 | 40 | 25 | 11 | 6 | 10 | 22 | 24 | 17 | 254 |
| 18 | 20 | 32 | 36 | 46 | 34 | 27 | 22 | 28 | 36 | 31 | 25 | 43 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | |
| 24 | 23 | 32 | 35 | 45 | 23 | 11 | 8 | 12 | 29 | 28 | 21 | 291 |
| 24 | 23 | 34 | 29 | 42 | 34 | 29 | 37 | 51 | 35 | 36 | 28 | 51 |

ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Չոր ցամաքային կլիմայական գոտի

Նկար 11.

Աղյուսակ 4.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

| Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Միջին տարեկան,°C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն,°C |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | | | |
| -3.6 | -0.9 | 5.6 | 12.7 | 17.5 | 21.5 | 25.3 | 24.8 | 19.8 | 13.0 | 6.0 | -0.6 | 11.8 | -29 | 43 |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | | | |
| -3.6 | -1.0 | 5.3 | 12.5 | 17.4 | 21.8 | 25.8 | 25.2 | 20.50 | 13.3 | 6.3 | -0.2 | 11.9 | -28 | 42 |

Աղյուսակ 5.

Քամիներ

| Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, hՊա | Ամիսներ | Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | Միջին ամսական արագությունը, մ/վ | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ուղղությունները | | | | | | | | | | |
| | | Հս | Հս-Արլ | Արլ | Հվ-Արլ | Հվ | Հվ-Արմ | Արմ | Հս-Արմ | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | | |
| 920.2 | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 | 88 | 0.4 | 7 |
| | | 1.7 | 1.7 | 2.7 | 3.1 | 2.4 | 2.0 | 2.2 | 1.74 | | | |
| | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 15 | 74 | | |
| | | 1.7 | 1.8 | 2.1 | 2.8 | 2.5 | 2.8 | 2.8 | 2.6 | | | |
| | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 | 80 | | |
| | | 1.7 | 1.9 | 1.7 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.7 | 2.3 | | | |
| | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 | 85 | | |
| | | 1.6 | 1.5 | 2.1 | 2.0 | 1.5 | 2.1 | 2.4 | 2.0 | | | |
| Երևան «Էրեբունի» կայան | | | | | | | | | | | | |
| 912.1 | հունվար | 4 | 9 | 11 | 14 | 21 | 25 | 12 | 4 | 76 | 0.7 | 1.5 |
| | | 2.2 | 2.2 | 2.2 | 2.9 | 2.7 | 2.3 | 2.6 | 2.7 | | | |
| | ապրիլ | 7 | 14 | 8 | 16 | 20 | 16 | 13 | 6 | 45 | 1.9 | |
| | | 3.1 | 3.2 | 2.8 | 4.0 | 3.1 | 3.0 | 3.8 | 3.6 | | | |
| | հուլիս | 17 | 28 | 4 | 9 | 17 | 13 | 8 | 4 | 36 | 2.8 | |
| | | 5.2 | 5.7 | 2.8 | 2.7 | 2.4 | 2.7 | 2.9 | 4.3 | | | |
| | հոկտեմբեր | 6 | 18 | 10 | 10 | 21 | 20 | 10 | 5 | 63 | 1.0 | |
| | | 2.9 | 2.5 | 2.1 | 2.5 | 2.3 | 2.4 | 2.9 | 3.5 | | | |

Աղյուսակ 6.

Արևափայլի տևողությունը, ժամ

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 87 | 108 | 167 | 186 | 251 | 305 | 341 | 319 | 276 | 204 | 138 | 89 |

Աղյուսակ 7.

Անարև օրերի քանակը, օր

| I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաշատ կայան | | | | | | | | | | | |
| 11 | 7 | 5 | 3 | 0.9 | 0.2 | - | 0.1 | 0.2 | 1 | 5 | 10 |

4.3. Օդային ավազան

«ՌԱՊՍ» ձկնաբուծարանի շրջանում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգում ներառված մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա: Մոտակա դիտակայանը գտնվում է Արարատ քաղաքում :

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով:

Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» (ներկայումս՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն») ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 8.

| Բնակչության քանակը (հազ.) | Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ$^3$) | | | |
|---|---|---|---|---|
| | Փոշի | Ծծմբի երկօքսիդ | Ազոտի երկօքսիդ | Ածխածնի օքսիդ |
| 50 -125 | 0,4 | 0,05 | 0,03 | 1,5 |
| 10 - 50 | 0,3 | 0,05 | 0,015 | 0,8 |
| < 10 | 0,2 | 0,02 | 0,008 | 0,4 |

Ձկնաբուծարանի տարածքին մոտ գտնվող Հովտաշատ, Սիփանիկ, Հայանիստ և Դարբնիկ բնակավայրերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ:

Հետևաբար, ձկնաբուծարանի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիշ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ$^3$, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ$^3$, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ$^3$ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ$^3$:

### 4.4. Ջրային ռեսուրսներ

Ձկնաբուծարանի շրջանում խոշոր ջրագրական միավորները Հրազդան և Սև ջուր գետերն են:

Մինչև Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը Հրազդանը սկիզբ է առել լճից Սևան քաղաքի մոտակայքում: Գետի ավազանը նրա վերին հոսանքներում սահմանափակված է հյուսիսում Փամբակի, արևմուտքում՝ Ծաղկունյաց և արևելքում՝ Գեղամա լեռնաշղթաներով: Գետը հիմնականում հոսում է նեղ կիրճով: Երևանից ներքև նա դուրս է գալիս Արարատյան դաշտ և թափվում է Արաքս գետը Մեծամորի գետաբերանից 5 կմ ներքև: Գետի երկարությունը 141 կմ է, անկումը մոտ 1000 մ, ջրհավաք ավազանի մակերեսը առանց Սևանա լճի 2560 կմ$^2$: Լեռնագրական, ջրաերկրաբանական և երկրաբանական պայմաններով գետի ջրհավաք ավազանը բաժանվում է միմյանցից խիստ տարբերվող երկու մասի: Աջ ափում գերակշռում են

ջրակայուն շերտերը, ձախ կողմից, ընդհակառակը, ջրահավաք ավազանը կազմված է խիստ ճեղքավորված ջրաթափանց ապարներից: Այս է պատճառը, որ գետը նշանակալի վտակներ ունի միայն աջ ափից (Մարմարիկ, Դալար, Արպիջգետ): Շնորհիվ այն բանի, որ Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ունի մեծ անկում, հոսում է Արարատյան գոգահովտով, հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, այն իրավամբ համարվում է Հայաստանի հիմնական ջրային երակը: Գետը լիարժեք կերպով օգտագործվում է Սևան-Հրազդան ջրատնտեսական համալիրում ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Սև ջուր (Մեծամոր) գետը Արաքսի ձախ վտակն է: Սկիզբ է առնում Մեծամոր լճից՝ 860մ բարձրությունից: Երկարությունը 38կմ է, ջրհավաք ավազանը՝ 480 կմ$^2$: ՀՀ միակ գետն է, որն ունի հարթավայրային բնույթ (միջին թեքությունը՝ 1 մ/կմ) և ստորերկրյա սնում (93%): Հոսում է Արարատյան դաշտի ճահճապատ տեղանքներով: Տարեկան միջին ծախսը 33,9 մ$^3$/վ է (Ռանչպար գ.): Խոշոր վտակը Քասաղն է:

Մասիս դիտակետում Հրազդան գետի և Ռանչպար դիտակետում Սև ջուր գետի հիդրոլոգիական բնութագրիչներն են.

Աղյուսակ 9.

| Գետ-դիտակետ | Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ$^2$ | Բազմամյա միջին տարեկան ելքը, մ$^3$/վ | Հոսքի մոդուլը, լ/վ*կմ$^2$ | Հոսքի շերտը, մմ | Հոսքի ծավալը, մլն.մ$^3$/տ | Առավելագույն ելքը, մ$^3$/վ | Նվազագույն ելքը, մ$^3$/վ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հրազդան-Մասիս | 2500 | 25.8 | 11.1 | 350 | 814 | 174 | 2.31 |
| Սև ջուր-Ռանչպար | 3540 | 24.3 | 6.88 | 217 | 768 | 152 | 5.70 |

Հրազդան և Սև ջուր գետերի ջրերի որակի դիտակետերի տեղադիրքը ներկայացված է նկար 12-ում և 13-ում :

Գետերի որակը ներկայացվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էջի տվյալների:

2023 թվականի երկրորդ եռամսյակի դիտարկումների արդյունքներով՝ Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև հատվածում ապրիլ և հունիս ամիսների գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Արգնի ՀԷԿ-ից վերև ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ
Հանքավան
57
47
92
49
48
58
42
51
Գեղամավան
50
312
311
43
Ծաղկաձոր
52
Հրազդան
Քաղսի
Չարենցավան
44
53
Արգել
Բյուրեղավան
Նոր Հաճն
54
Արզնի
Աբովյան
Վաղարշապատ
225
112
45
Գեղանիստ
59
ԵՐԵՎԱՆ
Դարբնիկ
55
Մասիս
46
56
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Մարզկենտրոն
Քաղաքներ
Բնակավայրեր
Որակի մոնիթորինգի դիտակետեր
Հիդրոլոգիական դիտակետեր
Գետային ցանց
ՀՀ պետական սահման
Լճեր և ջրամբարներ
ԵՐԵՎԱՆ
Հրազդան գետի ավազան
0
3.5
7
14
կմ

Նկար 12.


ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ
ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ
N
Թալին
Արմավիր
Մեծամոր
Վաղարշապատ
Ռանչպար
34
35
36
40
41
42
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Մարզկենտրոն
Քաղաքներ
Բնակավայրեր
Որակի մոնիթորինգի դիտակետեր
Հիդրոլոգիական դիտակետեր
Գետային ցանց
ՀՀ պետական սահման
Լճեր և ջրամբարներ
Մեծամոր գետի ավազան

Նկար 13.

2023 թվականի օգոստոս ամսվա դիտարկումներով Հրազդան գետի ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նկար 14-ում:




Նկար 14.

Սև ջուր (Մեծամոր) գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածում ջրի որակը ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը ապրիլ և հունիս ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

2022 թվականի դիտարկումների տվյալներով Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և փոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր փոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և փոսֆատ իոններով, վանադիումով, ընդանիուր անօրգանական ազոտով և ընդհանուր փոսֆորով:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք՝ պայմանավորված ամոնիում և

նիտրիտ իոններով, մանգանով, կախույթային չոր նյութերով, Ռանչպար գյուղից ներքև՝ նիտրիտ իոնով և բորով:

Արարատյան դաշտի սահմաններում է գտնվում ստորերկրյա քաղցրահամ խմելու ջրերի արտեզյան ավազանը, որը տարածքի էկոլոգիական համակարգի որոշիչ բաղադրիչն է:

Ավազանը կազմված է ստորերկրյա ջրերի հինգ ավազաններից (նկար 15), որոնց ջրային ռեսուրսները հաշվարկվել են 1984 թվականին և ներկայցված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10.

Արարատյան արտեզիան ավազանի ջրային ռեսուրսները

| Ստորերկրյա ջրերի ավազանը | Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ | Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ |
|---|---|---|
| Արազդայանի իջվածք | | 2138.9 |
| Արտաշատի իջվածք | 224.5 | 3056.7 |
| Գայ-Հայկաշենի հանքավայր | | 5063.6 |
| Հոկտեմբերյանի իջվածք | 18436.6 | 31880.8 |
| Սովետաշենի բարձրացում | 3260.4 | 9601.8 |
| Ընդամենը | 21921.2 | 51741.8 |




Նկար 15.

4.5. Հողեր

«ՌԱՊՍ» ՍՊԸ ձկնաբուծարանի շրջանում զարգացած են մարգագետնաճահճային աղուտ-ալկալի կավավազային և ոռոգելի խոնավ-մարգագետնային գորշ աղուտ-ալկալի հողերը (նկար 16):

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5% :

Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է:




Նկար 16.

Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

Բուն ձկնաբուծարանի տարածքն ամբողջությամբ բետոնապատ է, առանձին հատվածներ՝ ասֆալտապատ: Բայց հողային տարածքներ ձկնաբուծարանի սահմաններում չկան:

4.6. Բուսական և կենդանական աշխարհ

Ձկնաբուծարանի շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 17) :




Նկար 17.

Բուն ձկնաբուծարանի տարածքն ամբողջությամբ բետոնապատ է, առանձին հատվածներ՝ ասֆալտապատ, բնական նուսածածկ ձկնաբուծարանի տարածքում չի պահպանվել : Ձկնաբուծարանին հարակից տարածքներում նշվել են օշան հավամրգանման (Salsola ericoides Bieb.), սարսազան կոնաձև (Halocnemum

strobilaceum Pall. Bieb), անցողունիկ հեռացած (Puccinellia distans), սեզ սողացողը (Elytrigia repens), հազարատերևուկ նեղատերև (Achillea tenuifolia), դաշտավլուկ սոխուկային (Poa bulbosa), օշինդր բուրավետը (Artemisia fragrans Willd.), լվածաղիկ արծաթատերևը (Tanacetum argyrophyllum C. Koch. Tzvel.), փշոտ կապարը (Capparis spinosa) և սովորական եղեգը (Phragmites communis), որն աճում է ջրերի հարևանությամբ՝ առավել խոնավ հատվածներում:

Անտառածածկ տարածքներ, անտառային հողեր ձկնաբուծարանի շրջանում չկան:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, ձկնաբուծարանի շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- միկրոկնեմում մարջանանման (Microcnemum coralloides (Loscos et Pardo) Font-Quer) – վտանգված տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքում՝ աղակալած ճահիճներում և աղուտներում, ձկնաբուծարանից մոտ 6կմ հեռավորության վրա,
- հիրիկ մուսուլմանական (Iris musulmanica Fomin) – վտանգված տեսակ, աճում է Մխչյան և Մասիս գյուղերի շրջակայքում՝ ձկնաբուծարանից 12-15կմ հեռավորության վրա,
- ջրահարս փոքր (Najas minor L.) – խոցելի տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, ձկնաբուծարանի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- կղմուխ Օշեի (Inula aucheriana DC.) - վտանգված տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, ձկնաբուծարանի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- բիեներցիա շուրջաթև  (Bienertia cycloptera Bunge) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Մասիս գյուղի շրջակայքում, ձկնաբուծարանի տարածքից մոտ 15կմ հեռավորության վրա:

| | |
|---|---|
|  |  |
| Microcnemum coralloides | Iris musulmanica Fomin |

| | | |
|---|---|---|
|  |  |  |
| Najas minor L. | Inula aucheriana DC. | Bienertia cycloptera Bunge |

Ինչպես արդեն նշվել է, հայցվող տարածքը ամբողջությամբ բետոնապատ է կամ ասֆալտապատ, վերը թվարկած՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում հաշվառված բուսատեսակները տարածքում չեն դիտարկվել:

Բետոնապատ/ասֆալտապատ լինելու, ինչպես նաև աշխատանքային գոտի հանդիսանալու պատճառով ձկնաբուծարանի տարածքում չեն բնակվում խոշոր կաթնասուններ, սողուններ: Թռչուններից դիտարկվել է սովորական կաչաղակ և տնային ճնճղուկ: Քանակապես շատ են միջատները՝ ճանճեր, մոծակներ, բզեզներ:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից ձկնաբուծարանի շրջանում հայտնի են.

- Ուբադչի ճպուռ (Gomphus ubadschii Schmidt) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Բուրաստան գյուղի շրջակայքից, ձկնաբուծարանի տարածքից մոտ 15կմ հեռավորության վրա,
- Սիմպեկտա ճպուռ (Sympecma paedisca) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Արտաշատ քաղաքի շրջակայքում, ձկնաբուծարանի տարածքից շուրջ 21կմ հեռավորության վրա,
- Վան Բրինկի նետիկ (Coenagrion vanbrinkae Lohmann) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, ձկնաբուծարանի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- Սևծովյան ճպուռ (Libellula pontica Selys) – ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից, ձկնաբուծարանի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,
- Անդրկովկասյան տակիրյան կլորագլուխ (Phrynocephalus orvathi) – խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ, հատնի է Արտաշատի տարածաշրջանի նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում, մոտ 21կմ հեռավորության վրա,

- Փոքր ճագարամուկ (Allactaga elater) - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հայտնի է Արարատի մարզի կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում (տակիրներ), չոր լեռնատափաստանի աղուտային և անապատացած բիոտոպերում, հաճախ աղուտային, ավելի հազվադեպ` օշինդրային բուսական խմբավորումներով:

- Աղավնաբազե (Falco columbarius Linnaeus) - հազվագյուտ, անհետացող, սակավաթիվ և քիչ ուսումնասիրված տեսակ է, Հայաստանում չվահյուր ք.Երևանի շրջակայքում և ձմեռող Հրազդանի շրջանում:

- Եվրոպական ճնճղաճուռակ – քիչ ուսումնասիրված. Չվող, քիչ տարածված սակ: Գնահատված է որպես «Խոցելի» տեսակ: Տարածված է Հայաստանի հարավային և հյուսիս-արևելյան շրջաններում:

| | | |
|---|---|---|
|  |  |  |
| Gomphus ubadschii Schmidt | Sympecma paedisca | Coenagrion vanbrinkae Lohmann |
|  |  |  |
| Libellula pontica Selys | Allactaga elater | Falco columbarius Linnaeus |

Ձկնաբուծարանի տարածքում վերը նշված կենդանական տեսակները չեն դիտարկվել:

4.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Ռապս» ձկնաբուծարանի տարածքը ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում : Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև ձկնաբուծարանին հարակից տարածքներում :

Արարատի մարզում, ձկնաբուծարանից մոտ 23կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մեկ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (Ursus arctos syriacus), բեզոարյան այծի (Capra aegagrus), կովկասյան ընձառյուծի (Panthera pardus ciscaucasica) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Ձկնաբուծարանից մոտ 36կմ հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր: Էնդեմիկ ներկայացուցիչներից են Salsola tamamschjanae, Acantholimon araxanum: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում

գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ:

Ջկնաբուծարանից մոտ 29կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող` 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են`

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում` ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

Բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում նաև բնության հուշարձանը : ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ: ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ 10-ում :

Աղյուսակ 10.

| Հ/Հ | Անվանումը | Տեղադիրքը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | «Անձավիկ» քարանձավ | Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա |
| 2. | «Դաշտաքար» քարանձավ | Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400մ բարձրության վրա |
| 3. | «Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ» | Ծաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա |
| 4. | «Անանուն» շերտավոր նստվածքներ | Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա |
| 5. | «Անանուն» անտիկլինալ ծալք | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 6. | «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա | Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 7. | «Անանուն» ծալքագոյացման մերկացում | Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին |
| 8. | «Հորթունի» բրածո փլորա | Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ |
| 9. | «Ջերմանիսի» բրածո փլորա | Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում |
| 10. | «Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա | Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ |
| 11. | «Աղակալած ճահճուտ» | քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա |

Ձկնաբուծարանի տարածքում, հարակից բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Ձկնաբուծարանի տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է մոտ 38կմ:

4.8. Պատմամշակութային ժառանգություն

ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ:

Ըստ նշված որոշման տվյալների՝ Հովտաշատ բնակավայրում հաշվառված է մ.թ.ա 3-2 հազարամյակի բնակատեղի, որը գտնվում է գյուղից մոտ 1կմ հյուսիս և ձկնաբուծարանի տարածքից մոտ 2.6կմ հեռավորության վրա:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ստորև ներկայացվում է շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների հակիրճ բնութագիրը:

- Մթնոլորտային օդի վրա ազդեցություններ չեն դրսևորվում, քանի որ ձկնաբուծարանի տարածքում չկան փոշու կամ վնասակար գազերի արտանետման աղբյուր հանդիսացող արտադրամասեր/տարածքներ, չի իրականացվում այնպիսի գործունեություն, որը կարող է հանգեցնել մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների փոփոխությանը:

- Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները կապված են ջրառի իրականացման և կեղտաջրերի հեռացման հետ: Ինչպես արդեն նշվել է «ՌԱՊՍ» ՍՊ ընկերությունը 27.03.2023թ.-ի №0064-23 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան իրականացնում է ջրառ 3 գործող խորքային հորերից՝ առավելագույնը 5046.97հազ.մ$^3$/տարի, 13824.6մ$^3$/օր, 160.0լ/վ ծավալով:

Ջրհեռացումը կատարվում է դրենաժային համակարգով դեպի Հրազդան գետը 4541.38հազ.մ$^3$/տարի, 12442.2մ$^3$/օր, 144.0լ/վ ծավալով:

Կեղտաջրերի մաքրում չի կատարվում: Ջրօգտագործման թույլտվությամբ և 27.03.2023թ.-ի կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոքի №34 նորմերով սահմանվել են կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոքի հետևյալ տվյալները՝ ԹԿՊ$_5$ 2.54գ/մ$^3$, ԹԿՊ 10.15գ/մ$^3$, կախութային մասնիկներ 12.15գ/մ$^3$, քլորիդներ 15.45գ/մ$^3$, սուլֆատներ 18.23գ/մ$^3$:

- Հողային ռեսուրսների վրա աղտոտման հետ կապված ազդեցություններ չեն դրսևորվում, քանի որ ձկնաբուծարանի տարածքը բետոնապատված է, մասամբ ասֆալտապատված է: Ընդհանուր առմամբ «Ռապս» ՍՊ ընկերությանը գործունեություն իրականացնելու նպատակով հատկացված է մոտ 1.35հա տարածք:

- Ձկնաբուծարանի տարածքում չկա բնական բուսական ծածկույթ, անտառածածկ տարածքներ, ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն աճում: Հետևաբար, բուսական աշխարհի վրա ազդեցություններ չեն դրսևորվելու:

- Ձկնաբուծարանի տարածքում չկան խոշոր կաթնասունների բներ/որջեր, չեն նշվել սողուններ կամ երկկենցաղներ: Տարածաշրջանի թռչնաշխարհի ներկայացուցիչները պարբերաբար որս էին իրականացնում ձկնաբուծարանի տարածքում, ջրավազաններից որսալով աճեցվող ձկնատեսակը: Սակայն աէրատորների աշխատանքը հանդիսանում է խանգարող/անհանգստացնող

հանգամանք թռչունների համար, ինչի արդյունքում թռչունները այլևս չեն ներխուժում ձկնաբուծարանների տարածք, բացառվել է մարդ/թռչուն «հակամարտությունը», թռչունների դեմ պայքարելու անհրաժեշտությունը: Հետևաբար, կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու:

- Ձկնաբուծարանի տարածքում առաջանում են երկու տեսակի թափոններ. չտեսակավորված կենցաղային աղբ և սննդամթերքի արտադրության կեղտաջրերի նստվածք.

1) կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), տարեկան մոտ 0.9տ, ծածկագիրը 91200400 01 00 4 :

2) սննդամթերքի արտադրության կեղտաջրերի նստվածք, տարեկան մոտ 40կգ, ծածկագիրը 11139030 02 00 4 :

- Ձկնաբուծարանին հարակից շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան, հետևաբար վտանգված էկոհամակարգերի վրա ծիածանափայլ իշխանի արտադրությունը ազդեցություն չի ունենալու :

- Հովտաշատ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա ձկնաբուծարանի աշխատանքը ազդեցություն չի ունենալու, քանի որ գյուղում հաշվառված մ.թ.ա 3-2 հազարամյակի դամբարանադաշտը գտնվում է ձկնաբուծարանից մոտ 2.6կմ հեռավորության վրա:

- Հովտաշատ բնակավայրի բնակելի շինությունները գտնվում են ձկնաբուծարանի տարածքից 0.9կմ հեռավորությունների վրա: Ձկնաբուծարանի տարածքում աղմուկի առաջացումը կապված է ջրավազանների ջուրը թթվածնով հագեցնող և ջրի շրջապտույտը ապահովող աէրատորների աշխատանքի հետ:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Ձկնաբուծարանի տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում (ազդակիր Զորակ բնակավայրում) որոշվում է `

LAտար = Laէկվ - ΔLahեռ - ΔLAկանաչ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը ձկնաբուծարանի տարածքում, LAէկվ=65դԲԱ,

ΔLAhեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված (Հովտաշատ բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են 0.9կմ հեռավորության վրա), ΔLAhեռ կազմում է 20դԲԱ,

պΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=10դԲԱ:

Աղմուկի մակարդակը Հովտաշատ բնակավայրի արվարձաններում կկազմի՝

Laտար = Laէկվ - ΔLahեռ -ΔLaկանաչ = 65 – 20– 10 = 35դԲԱ (նորման 45դԲԱ):

Հետևաբար, ձկնաբուծարանի մշտական աշխատատեղերով տարածքներում աէրատորների աշխատանքից առաջացող աղմուկի մակարդակը և ազդակի Հովտաշատ բնակավայրի տարածքում հաշվարկային եղանակով ստացված աղմուկի մակարդակը գտնվում են նորմատիվային փաստաթղթերով սահմանված նորմերում:

Ձկնաբուծարանի տարածքի օժանդակ շինությունում կազմակերպված են աշխատակիցների բնականոն աշխատանքի համար անհրաժեշտ սանիտարակենցաղային պայմանները՝ հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պարագաներով կահավորված սենյակ, հանդերձարան և լվացարանով ու զուգարանակոնքով սանհանգույց (մշտական համալրվում է անհրաժեշտ հիգիենիկ պարագաներով՝ հեղուկ օճառ, թղթե սրբիչներ, զուգարանի թուղթ, ախտահանող հեղուկներ):

## 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

| Բնական միջավայրը | Հնարավոր ազդեցությունը | Ազդեցության մեղմման/չեզոքացման կամ միջավայրի բարելավման միջոցառումը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| Մթնոլորտային օդ | Ազդեցություններ չեն դրսևորվում | Ձկնաբուծարանի տարածքի կանաչապատում |
| Ջրային ռեսուրսներ | Ջրառի իրականացում 3 խորքային հորից | Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում |
| | | Ջրի շրջանառու համակարգի կիրառում (հեռանկարային) |
| | | Ջրաբաշխիչ սարքերի և ջրաչափերի տեղադրում, կնքում պետական կառավարման լիազոր մարմնի կողմից |
| | | Ջրերի որակի մշտադիտարկում ջրառի կետում, եռամսյակը մեկ անգամ հաճախականությամբ |
| | | Ջրերի որակի մշտադիտարկում ջրավազաններում, եռամսյակը մեկ անգամ հաճախականությամբ |
| | Ջրհեռացում | Ջրհեռացման անհատական նորմերով սահմանված ցուցանիշների պահպանություն |
| | | Ձկնակերի արդյունավետ բաշխում |
| | | Ջրի որակի մշտադիտարկում ջրհեռացման կետում, եռամսյակը մեկ անգամ հաճախականությամբ |
| | | Ջրի որակի մշտադիտարկում Հրազդան գետ թափման կետից հոսքն ի վար, մոտ 100մ հեռավորության վրա, եռամսյակը մեկ անգամ հաճախականությամբ |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| Հողային ռեսուրսներ | Ազդեցություններ չեն դրսևորվում | Մեքենաների տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող ավտոճանապարհներով |
| | | Կենցաղային աղբի հավաքում անտափանց տարողությունների մեջ, հետագա տեղափոխում գործող աղբավայր պայմանագրային հիմունքներով |
| Բուսական աշխարհ | Ազդեցություններ չեն դրսևորվում | - |
| Կենդանական աշխարհ | Ազդեցություններ չեն դրսևորվում | - |
| Բնության հատուկ պահպանվող տարածքներ | Ազդեցություններ չեն դրսևորվում | - |
| Պատմամշակութային ժառանգություն | Ազդեցություններ չեն դրսևորվում | - |

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան կտրվածքով նապատեսվում է հատկացնել մոտ 729.5հազ.դրամ:

## 7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ

Գործունեության ընթացքում մարդածին բնույթի հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝ հրդեհի առաջացումը, աշխատակիցների վնասվածքները, շահագործվող տեխնիկայի վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների:
- հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- ձկնաբուծարանի տարածքը ապահովվում է հակահրդեհային անվտանգության միջոցներով (բահեր, ավազ, կրակմարիչներ, հրշեջ հիդրանտի տեղադրում):
- ձկնաբուծարանի տարածքում հատուկ հատկացված վայրում տեղադրվում է դեղարկղիկ, աշխատողներն անցնում են դեղորայքի և բժշկական պարագաների ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

Ընդերքածին արտակարգ իրավիճակների՝ երկրաշարժի դեպքում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է ձկնաբուծարանում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- ընկերության մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանում,
- ձկնաբուծարանի տարածքում հատուկ հատկացված վայրում տեղադրել դեղարկղիկ, աշխատողներին ծանոթացնել դեղորայքի և բժշկական պարագաների ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերման կանոններին:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ) ի հայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են ձկնաբուծարանի տարածքում գտնվող, օդափոխման, ջեռուցման և ջրամատակարարման համակարգերով կահավորված օժանդակ շինություններում:

Հավելված 1.

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<ՌԱՊՍ>> ՍՊԸ
(Անուն, ազգանուն, անվանում)

Հողհատկացման հիմքը Անշարժ գույքի ստ. 06.07.2007թ. N 1560 պայմանագրի 02.07.07թ., 29.06.07թ. անդորրագրերի 02.07.08թ N 7 շին. թույլտ., շին. շահագործման փաստագրման 12.09.08թ N 4 ակտի

Արարատի (Մարզ) | Հովտաշատ (Համայնք) | գ. Հովտաշատ (Հասցե)

Մասշտաբ 1:2000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Մակերեսը(հա) | 1.35 | Գագաթ h/h | Կորդինատները X | Կորդինատները Y | Գծային չափերը | Սահմանակից սեփականատիրոջ (անուն, ազգանուն, անվանումը) |
| Ծածկագիրը | | | | | | |
| Նպատակային նշանակությունը | Ջրային | 1 | 8445187.0221 | 4440236.2360 | | |
| | | 2 | 8445181.2690 | 4440262.7724 | 27.10 | Համայնքի սեփ. |
| Գործառնական նշանակությունը | Ջկնատնտեսային | 3 | 8445202.2442 | 4440335.7389 | 75.90 | Համայնքի սեփ. |
| | | 4 | 8445333.2790 | 4440300.6424 | 135.60 | Համայնքի սեփ. |
| | | 5 | 8445307.5604 | 4440204.1187 | 99.90 | <<ՌԱՊՍ>> ՍՊԸ |
| Հողամասը ծանրաբեռնված է | Ծանրաբեռնված չէ | 1 | 8445187.0221 | 4440236.2360 | 124.90 | <<ՌԱՊՍ>> ՍՊԸ |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N ըստ հատակագծի համարակալման | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Գագաթ h/h | Կորդինատները X | Կորդինատները Y | Գծային չափերը |
| 1 | Տնտ. շինություն | 1 | 8445203.1064 | 4440323.0088 | |
| | | 2 | 8445204.0919 | 4440326.4193 | 3.55 |
| | | 3 | 8445208.0251 | 4440325.2619 | 4.10 |
| | | 4 | 8445207.0371 | 4440321.8426 | 3.55 |
| | | 1 | 8445203.1064 | 4440323.0088 | 4.10 |

Կատարող.......................... Հարություն Գևորգյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)
Որակավորման վկայականի համարը 0106 տրման ամիս ամսաթիվը 23.02.2012թ.

<<ՀԵՐՄԵՍ>> ՍՊԸ Ն. Հակոբյան

| N ըստ հողամասի Հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Կետի հ/հ | Կորդինատները | | Գծային չափերը մ |
|---|---|---|---|---|---|
| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | | |
| 7 | N 1 ջրավազան | 1 | 8445213.2646 | 4440237.7333 | |
| | | 2 | 8445219.3221 | 4440258.6749 | 21.80 |
| | | 3 | 8445226.1622 | 4440256.7715 | 7.10 |
| | | 4 | 8445220.0912 | 4440235.7823 | 21.80 |
| | | 1 | 8445213.2646 | 4440237.7333 | 7.10 |
| 8 | N 2 ջրավազան | | X | Y | |
| | | 1 | 8445221.0527 | 4440235.5075 | |
| | | 2 | 8445227.1256 | 4440256.5034 | 21.80 |
| | | 3 | 8445234.5401 | 4440254.4123 | 7.80 |
| | | 4 | 8445228.5525 | 4440233.3641 | 21.80 |
| | | 1 | 8445221.0527 | 4440235.5075 | 7.80 |
| 9 | Ծածկ | 1 | 8445195.8426 | 4440236.4895 | |
| | | 2 | 8445196.7176 | 4440239.4632 | 3.10 |
| | | 3 | 8445202.5696 | 4440237.7412 | 6.00 |
| | | 4 | 8445201.6945 | 4440234.7673 | 3.10 |
| | | 1 | 8445195.8426 | 4440236.4895 | 6.00 |
| 10 | Պարիսպ | 19.00 գծ/մ | | | |
| 11 | Ծածկ | 1 | 8445302.1965 | 4440274.2955 | |
| | | 2 | 8445303.9601 | 4440280.9145 | 6.85 |
| | | 3 | 8445322.0780 | 4440276.0870 | 18.80 |
| | | 4 | 8445320.3144 | 4440269.4679 | 6.85 |
| | | 1 | 8445302.1965 | 4440274.2955 | 18.80 |

| ՇԵՆՔ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N ըստ հողամասի Հատակագծի | Գործառնական նշանակությունը (անվանումը) | Կետի հ/հ | Կորդինատները | | Գծային մնգփաշ |
| | | | X | Y | |
| 2 | Ենթակայան | 1 | 8445211.5946 | 4440320.6673 | |
| | | 2 | 8445212.5340 | 4440323.9352 | 3.40 |
| | | 3 | 8445217.0428 | 4440322.6084 | 4.70 |
| | | 4 | 8445216.1035 | 4440319.3408 | 3.40 |
| | | 1 | 8445211.5946 | 4440320.6673 | 4.70 |
| 3 | Գոմ | 1 | 8445186.4740 | 4440238.7640 | |
| | | 2 | 8445181.2690 | 4440262.7724 | 24.55 |
| | | 3 | 8445186.7995 | 4440263.9283 | 5.65 |
| | | 4 | 8445192.0416 | 4440239.9445 | 24.55 |
| | | 1 | 8445186.4740 | 4440238.7640 | 5.65 |
| 4 | Շին. II հարկ | 1 | 8445196.7176 | 4440239.4632 | |
| | | 2 | 8445199.1453 | 4440247.7134 | 8.60 |
| | | 3 | 8445204.9973 | 4440245.9914 | 6.00 |
| | | 4 | 8445202.5696 | 4440237.7412 | 8.60 |
| | | 1 | 8445196.7176 | 4440239.4632 | 6.00 |
| 5 | Մանրաձկների արտադրամաս | | X | Y | |
| | | 1 | 8445279.0369 | 4440279.8154 | |
| | | 2 | 8445280.8397 | 4440286.5794 | 7.00 |
| | | 3 | 8445300.2570 | 4440281.3871 | 20.10 |
| | | 4 | 8445298.4593 | 4440274.6403 | 7.00 |
| | | 1 | 8445279.0369 | 4440279.8154 | 20.10 |
| 6 | N 3 ջրավազան | 1 | 8445302.1965 | 4440274.2955 | |
| | | 2 | 8445303.9601 | 4440280.9145 | 6.85 |
| | | 3 | 8445322.0780 | 4440276.0870 | 18.80 |
| | | 4 | 8445320.3144 | 4440269.4679 | 6.85 |
| | | 1 | 8445302.1965 | 4440274.2955 | 18.80 |

# Շ Ի Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի  Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

<<ՌԱՊՍ>> ՍՊԸ
(Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Արարատի  համայնք Հովտաշատ  հասցե գ. Հովտաշատ

Մասշտաբ 1:100




**1.Տնտ. շինություն**

H= 3.00մ
h= 2.70մ
D= 0,20մ




**2.Ենթակայան**

H= 3.30մ
h= 3.05մ
D= 0,20մ




**4.Շին. II հարկ**

H= 3.30մ
h= 3.00մ
D= 0,20մ
d=0.10;0.20մ

Կատարող՝ Հարություն Գևորգյան

Որակավորման վկայականի համարը 0106 տրված 23.02.2012թ.

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<ՌԱՊՍ>> ՍՊԸ
(Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Արարատի համայնք Հովտաշատ հասցե գ. Հովտաշատ

Մասշտաբ 1:200




3.Գոմ

H= 2.40մ
h= 2.35մ
D= 0.20մ




5.Մանրաձկների արտադրամաս

H= 3.00մ
h= 2.90մ
D= 0,20մ

Կատարող՝ Հարություն Գևորգյան

Որակավորման վկայականի համարը 0106 տրված 23.02.2012թ.

<<ՀԵՐՄԵՍ>> ՍՊԸ ______ Ն. Հակոբյան

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

<<ՌԱԴՍ>> ՍՊԸ

(Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Արարատի   համայնք Հովտաշատ   հասցե գ. Հովտաշատ

Մասշտաբ 1:200




6. N-3 Ջրավազան

h= 0.90մ
D= 0.20մ
d=0,20մ




7. N-1 Ջրավազան

h= 0.75մ
D= 0.20մ
d=0,20մ




8. N-2 Ջրավազան

h=0.70մ
D= 0,20մ

Կատարող՝ Հարություն Գևորգյան

Որակավորման վկայականի համարը 0106 տրված 23.02.2012թ.

Հավելված 2.

Հավելված N 1
ՀՀ Կառավարության 2003 թվականի
մարտի 7-ի N 218-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 0064-23

1 – 2 – Ջ/Կ – Ս – Վ

«ՌԱՊՍ» ՍՊԸ

(Ջրօգտագործողի անվանումը)

| | |
|---|---|
| ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ | «ՌԱՊՍ» ՍՊԸ |
| (ջրային ռեսուրսների կառավարման և | (ջրօգտագործման թույլտվություն ստացողի |
| ՆԱԽԱՐԱՐ Հ. ՍԻՄԻԴՅԱՆ | ՏՆՕՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ |
| պահպանության մարմնի ղեկավար) | պաշտոնը, ստորագրությունը,) |
| ստորագրությունը, անունը, ազգանունը | անունը, ազգանունը |

Կ.Տ

Տրված է 24 03 2023 թ. Ուժի մեջ է մինչև 24 09 2024 թ.

Գործունեության ժամկետը երկարաձգված է մինչև ____ ________ 20 թ.

| | |
|---|---|
| (ջրային ռեսուրսների կառավարման և | (ջրօգտագործման թույլտվություն ստացողի |
| պահպանության մարմնի ղեկավար) | պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը) |

1. *Ջրօգտագործողի հասցեն*

ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ գյուղ

*(ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը, (անունը, ազգանունը, հասցեն և հեռախոսը)*

2-րդ փողոց, տուն 49/1 հեռ. (093) 77 94 00

2. *Ջրօգտագործման վայրը* ՀՀ Արարատի մարզ

Մասիս համայնքի Հովտաշատ գյուղի վարչական տարածք

3. *Ջրառի վայրը* ՀՀ Արարատի մարզ

Մասիս համայնքի Հովտաշատ գյուղի վարչական տարածք

4. *Ջրօգտագործման նպատակը* /*ձկնաբուծական*/

5. *Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝*

*ա) մակերևութային ջրային ռեսուրսներ*

Չ

*բ) ստորերկրյա ջրային ռեսուրսներ* ***երեք գործող խորքային հոր առավելագույնը***՝ 5045.97 հազ.մ$^3$/տարի, 13824.6 մ$^3$/օր, 160.0 լ/վ

6.*Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը*

Տարեկան 365 օր 24 ժամյա ռեժիմով

7. *Ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները ժմը*

1. Ջրօգտագործման չափաքանակի վերահսկողություն, հաշվառում և սույն ջրօգտագործման թույլտվության 5-րդ կետի բ) ենթակետով սահմանված չափաքանակների չգերազանցում:

2. Ջրօգտագործման նպատակայնություն:

3. Սույն ՋԹ-ի անբաժանելի մաս հանդիսացող պայմանների կատարում:

* *Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորերկրյա ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:*

N 0064-23 27.03.2023թ.

## ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ
### ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 32-ի պահանջների համաձայն մշակված սույն պայմանները ենթակա են պարտադիր կատարման: Սույն պայմանների խախտումը, համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի, հիմք է ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

1. «Ռապս» ՍՊԸ-ն պարտավոր է՝

ա/ապահովել՝ N 0064-23 ջրօգտագործման թույլտվության ստացմամբ և ջրօգտագործման իրականացմամբ պայմանավորված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը.

բ/ արտակարգ իրավիճակներում և սակավաջրության ու երաշտի պայմաններում ապահովել շրջակա միջավայրի նախարարության պահանջները, որոնք ուղղված են հասարակական շահին և շրջակա միջավայրի պահպանմանը.

գ/ իր գործունեությամբ չնվազեցնել՝ մինչև N 0064-23 ջրօգտագործման թույլտվության ստացումը գոյություն ունեցող ավանդական ջրօգտագործողների ջրօգտագործման իրավունքները.

դ/ապահովել պայմաններ՝ շրջակա միջավայրի նախարարության աշխատակցի կողմից ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը հսկելու համար.

ե/ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտացված ջրաերկրաբանական կազմակերպության միջոցով կատարել խորքային հորերի ռեժիմային դիտարկումներ և արդյունքները տարեկան մեկ անգամ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն ջրային պետական կադաստրում գրանցման.

զ/ տարբեր պատճառներով ջրօգտագործման դադարեցման (ծավալների նվազեցման) հետևանքով խորքային հորի չշահագործման դեպքում շրջակա միջավայրի նախարարության կողմից սահմանված ձևով և ժամկետում պահուստավորել, կոնսերվացնել (կախված հորերի շահագործական և տեխնիկական վիճակից) այն:

2. Սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո N 0266-21 ջրօգտագործման թույլտվությունը տրված 26.07.2021թ. այլևս չի գործում:

**3. Օրենքով նախատեսված լինելու դեպքում, մեկամսյա ժամկետում դիմել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման:**

4. Ապահովել ՀՀ կառավարության 22.05.2003թ. «Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» 703-Ն որոշման կարգի 6.1 կետով սահմանված ջրօգտագործման և ձկնարտադրության տարեկան ծավալի չափաքանակները, այն է

ա/ 1 լ/վ ջրաելքով իշխան ձկնատեսակի համար՝ նվազագույնը 700 կգ

բ/ 1 լ/վ ջրաելքով թառափ ձկնատեսակի համար՝ նվազագույնը 800 կգ

գ/ 1 լ/վ ջրաելքով թառափ և իշխան ձկնատեսակների համար՝ ընդհանուր նվազագույնը 750 կգ:

5. Տվյալ տարածքը սպասարկող համապատասխան ՋՕԸ-ի պահանջով ձկնաբուծական գործունեությունից առաջացող հոսքաջրերը ոռոգման նպատակով անվարձահատույց փոխանցել ՋՕԸ-ին:

6. Ապահովել ՀՀ կառավարության 14.01.10թ. «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն որոշման պահանջները.

ա/ մինչև ջրօգտագործումն իրականացնելը ջրառի կետերն ապահովել առցանց հոսքաչափերով, հաշվառված տվյալների արխիվացման տեխնիկական հնարավորությամբ.

բ/ կատարել ջրօգտագործման, ջրահեռացման և ջրային ռեսուրսների աղտոտման հաշվառման աշխատանքներ և կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ յուրաքանչյուր տարվա մինչև ____Մարտի____-ի __27__-ը:

7. Ջրավազանային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները ենթակա են վերանայման:

8. Հայաստանի Հանրապետությունը և ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության մարմինը սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո պատասխանատվություն չեն կրում ջրային ռեսուրսների նվազման հետևանքով ջրօգտագործողի կրած վնասների համար և չեն հատուցում դրանք:

9. Ջրառի և ջրահեռացման կոորդինատական կետերն են.

| Ջրառ՝ | Ջրահեռացում՝ |
|---|---|
| X = 44° 21' 25.1" Y = 40° 05' 41.1" | X = 44° 21' 33.52" Y = 40° 05' 36.15" |
| X = 44° 21' 30.3" Y = 40° 05' 39.6" | X = 44° 21' 26.71" Y = 40° 05' 38.33" |
| X = 44° 21' 29.4" Y = 40° 05' 37.1" | |

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

__________ Հ. Սիմիդյան

«27» ____03____ 2023 թ.

«Ռապս» ՍՊԸ-ի տնօրեն

__________ Ս. Սարգսյան

«27» ____03____ 2023 թ.

8. Ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները

***Դրենաժային համակարգ՝ Հրազդան գետ***

4541.38 հազ.մ$^3$/տարի, 12442.2 մ$^3$/օր, 144.0 լ/վ

9. Արտահոսքի նկարագրությունը

Կեղտաջրերի մաքրում չի կատարվում:

10. Կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի տվյալները

| | |
|---|---|
| ԹԿՊ$_{լիվ}$ | - 2.54 գ/մ$^3$ |
| ԹՔՊ | - 10.15 գ/մ$^3$ |
| Կախ. մասնիկներ | - 12.15 գ/մ$^3$ |
| Քլորիդներ | - 15.45 գ/մ$^3$ |
| Սուլֆատներ | - 18.23 գ/մ$^3$ |

11. Ջրերի ստանդարտները և(կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները

12. Հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերխնավ և առափնյա կարևոր բնական միջավայրերը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար

Մշակել և իրականացնել՝ ջրակորուստների կրճատման և նորմատիվային ջրաքանակի արդյունավետ օգտագործման միջոցառումների ծրագիր:

*13. Համապատասխան պահանջներ՝ ջրօգտագործման հաշվառման, մոնիտորինգի, գրանցման և ճշգրտման համար*

1. Ջրառի կետերն ապահովել ջրաչափական դիտակետերով, ջրաչափերով և սահմանված կարգով դրանք կապարակնքել:
2. Կատարել ջրօգտագործման հաշվառման աշխատանքներ և սահմանված կարգով բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ներկայացնել 2-տա (ջրտնտ) տարեկան հաշվետվությունը:

*14. Համապատասխան երաշխիքներ՝ ջրային ռեսուրսներին վնասներ հասցվելու դեպքում*

ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների խախտման դեպքում փոխհատուցել հասցված վնասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*15. Ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարներն ու վճարման ժամանակացույցը.*

1. Պետական տուրքի անդորրագիր N [illegible]
2. Բնօգտագործման և բնապահպանական վճարները կատարել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներով:

*16. Ջրօգտագործման թույլտվությունը գրանցված է պետական ջրային կադաստրում:*

Սույն ջրօգտագործման թույլտվությունը կազմված է երկու օրինակից:

*17. Խորքային հորի հորատմանը ներկայացվող պահանջները*

Հավելված 3.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «25» Դեկտեմբերի 2015 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ՌԱՊՍ» ՍՊԸ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Հովտաշատ 12-րդ փողոց 47

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ թիվ 4` 12/09/2008թ.,թիվ 6` 09/09/2013թ., Անշարժ գույքի օտարման 06/07/07թ. թիվ 1560 պայմանագիր, Կառուցման թույլտվության մասին որոշում եւ թույլտվություն` թիվ 7` 02/07/2008թ.,թիվ 12`18/07/2013թ.

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը` 03-054-0212-0008

Մակերեսի չափը (հա)` 1.35

Նպատակային նշանակությունը` ջրային

Գործառնական նշանակությունը կամ ճողատեսքը` Ջրային

Գրանցված իրավունքի տեսակը` ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 25122015-03-0041, գաղտնաբառ` HG23CICSYMKN     էջ 1

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | 03-054-0212-0008-002-000 | սանիտարական հանգույց | 4.2 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | 03-054-0212-0008-003 | Արտադրամաս | 95.5 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 3 | 03-054-0212-0008-004 | փոքր ձկների լճակ | 111.36 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 4 | 03-054-0212-0008-006 | ձկնաճեցման լճակներ | 1156.56 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 5 | 03-054-0212-0008-007 | հողաթմբե լճակներ | 702 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 6 | 03-054-0212-0008-008 | ձկնաճեցման լճակներ | 602.1 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 7 | 03-054-0212-0008-009 | ձկնաճեցման լճակներ | 3092.32 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 8 | 03-054-0212-0008-001-000 | Վարչական շենք | 215.2 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 9 | 03-054-0212-0008-011 | Տնտ. շինություն | 11.66 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 10 | 03-054-0212-0008-012 | Ենթակայան | 13.5 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 11 | 03-054-0212-0008-014 | Անասնաշենք | 126.79 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 12 | 03-054-0212-0008-015 | Մանրաձկների արտադրամաս | 13.02 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 13 | 03-054-0212-0008-016 | 3 Ջրավազան | 79.34 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 14 | 03-054-0212-0008-017 | 1 Ջրավազան | 84.78 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 15 | 03-054-0212-0008-018 | 2 Ջրավազան | 98.49 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 16 | 03-054-0212-0008-013 | Շինություն 2 հարկ | 44.19 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 17 | 03-054-0212-0008-019 | ծածկ | 18.6 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 18 | 03-054-0212-0008-020 | պարիսպ | 3.8 ք.մ., 7.6 խ.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 19 | 03-054-0212-0008-021 | ծածկ | 128.78 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 20 | 03-054-0212-0008-010 | պարիսպ | 21.44 ք.մ., 47.12 խ.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| 21 | 03-054-0212-0008-005 | ծածկ | 17.7 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |

Վկայական N 25122015-03-0041, գաղտնաբառ՝ HG23CICSYMKN

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարվել է 29/10/2013թ.,25/12/2015թ. կատարվել է հասցեի ուղղում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անուշ Վերանյան

զբաղեցրած պաշտոնը՝ Արարատի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

Կ.Տ.

Հավելված 4.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2022-11-08

«[illegible]»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

**Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

**Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին**

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **50000**

**Մասնակիցներ**

| Անուն Ազգանուն / Անվանում | Գրանցամատյանում գրառման ամսաթիվ | Բաժնեմասի չափը | Բաժնեմասի չափը ՀՀ դրամով | |
|---|---|---|---|---|
| **ՍԵԴՐԱԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԳԱՐԻԿԻ**<br>Անձնագիր h/h AN0349647 2013-02-05 տրվ. 001 ի կողմից<br>ՀԾՀ 2802670312<br>Հասցե՝ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ Փ. / Շ / 33 / 22 ԱՐԱԲԿԻՐ 0033 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ | 2016-05-19 | 100 % | 50000 | |

**Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ**

| Գրանցման ամսաթիվ | Փոփոխություններ |
|---|---|
| 2007-06-06 | Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |
| 2010-12-21 | Մասնակիցների փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում<br>Սեփականության վկայագրի տրամադրում |
| 2010-12-22 | Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն<br>Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)<br>Մասնակիցների փոփոխություն |
| 2012-02-01 | Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում |
| 2012-05-11 | Կանոնադրության թվայնացում |
| 2015-04-14 | Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)<br>Մասնակիցների փոփոխություն |
| 2016-05-19 | Մասնակիցների փոփոխություն |
| 2018-03-14 | Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |
| 2019-10-31 | Սահմանափակումների գրառում |
| 2019-12-30 | Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |
| 2020-05-25 | Սահմանափակումների գրառում |
| 2021-08-20 | Սահմանափակումների գրառում<br>Սահմանափակումների գրառում |
| 2022-11-08 | Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տեղեկությունների գրառում<br>Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն |

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

-աղվածքը տրամադրող՝ ______________ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ

ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 2022-11-08

46